Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023 «Գեղարքունիքի մարզի հաշմանդամ երեխաների բարեկեցության հաստատությունների հասանելիության բարելավման ծրագիր»

Երևան՝ 23 Սեպտեմբերի, 2025թ.

2025 թվականի սեպտեմբերի 23-ին, Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքում տեղի ունեցավ «Գեղարքունիքի մարզի հաշմանդամ երեխաների բարեկեցության հաստատությունների հասանելիության բարելավման ծրագրի» (մինչև 63,313 ԱՄՆ դոլար) ավարտական արարողությունը: Արարողությանը մասնակցեցին Հայաստանում Ճապոնիայի դեսպան պարոն ԱՕԿԻ Յուտական, Վարդենիս համայնքի ղեկավարի տեղակալ պարոն Աշոտ Բարսեղյանը, «Աստղավարդ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ-ի նախագահ տիկին Մելանյա Եփրեմյանը, ինչպես նաև վարչական աշխատակիցներ և նախագծի շահագրգիռ կողմեր:

Այս նախագիծը նպատակ ունի Վարդենիս համայնքի հաշմանդամ երեխաների համար նախատեսված սոցիալական հաստատությանը տրամադրել երկու տրանսպորտային միջոց: Այսպիսով մոտ 135 հաշմանդամ երեխաների, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից փախստականներ, հնարավորություն կստանան պարբերաբար այցելել հաստատություն և ստանալ անհրաժեշտ վերականգնողական, հոգեբանական թերապիա և այլ ծառայություններ, որոնք կարևոր են իրենց առողջ զարգացման և սոցիալական աճի համար: Չնայած տարածաշրջանում գրանցված են բազմաթիվ հաշմանդամ երեխաներ, նախկինում միայն սահմանափակ թվով մարդիկ կարող էին օգտվել այս հաստատությունից՝ հասարակական և սեփական տրանսպորտային միջոցների բացակայության պատճառով: Բացի այդ, Լռնային Ղարաբաղի վրա 2023 թվականի Սեպտեբերին Ադրբեջանի կողմից ռազմական հարձակման հետևանքով շատ հաշմանդամ երեխաներ, ինչպես նաև հոգեբանական թերապիայի կարիք ունեցող անձինք տեղափոխվեցին այս համայնք, ինչը մեծացրեց աջակցության կարիքը:

«Աստղավարդ» ՀԿ-ի նախագահ տիկին Մելանյա Եփրեմյանը երախտագիտություն հայտնեց՝ նշելով. «Տրամադրված մեքենաները հանդիսանում են կամուրջ երեխաների և նրանց անհրաժեշտ ծառայությունների միջև: Ճապոնիայի կառավարության աջակցության շնորհիվ մեր երկարաժամկետ երազանքը՝ թեթևացնել երեխաների տեղափոխման բեռը, իրականություն դարձավ այս երկու մեքենաների շնորհիվ, որի համար խորապես շնորհակալ ենք»: Դեսպան ԱՈԿԻ Յուտական նույնպես շնորհավորական խոսք ասաց արարողության ժամանակ՝ նշելով. «Ինչպես Սևանա լճի գեղեցիկ ափերի մոտ գտնվող պատմական կրոնական շինությունները դարեր շարունակ գոյատևել են որպես համայնքային աջակցության խորհրդանիշներ, այսօր մենք տեսնում ենք նույն հոգատարության և վճռականության ոգին, երբ այս համայնքն աշխատում է ապահովել երեխաների կարիքները: Ես անկեղծորեն շնորհավորում եմ այս նախագծի ավարտման կապակցությամբ»:

Ն
կար տեղի երեխաների հետ

Դեսպան Առկիի շնորհավորական ուղերձը

Երկու մեքենաները տրամադրվել են
ծրագրի արդյունքում

Նկար միջոցառման մասնակիցների հետ